

ՔՆԱՐԻԿ ԱՐՄԷՆԻ ԱՐԲԱՀԱՄԵԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀ

Վ. Պարտիզոնու անուան հայ նոր եւ նորագոյն գրականության

եւ նրա դասասանդման մեթոդիկայի ամբիոն

abrahamyanknarik21@aspu.am

ORCID ID: 0000-0002-7151-2172

DOI: 10.54503/978-5-8080-1568-5-98

ՌՈՄԱՆՏԻԶՄԻ ՍԱՐԻՆԵԱՆԱԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ

Բանալի բառեր՝ Սերգեյ Սարինեան, գրական ուղղություն, հայկական ռոմանտիզմ, ռեալիզմ, տիպաբանական յատկանիշներ, տեսական դրոյթներ, ֆրանսիական ռոմանտիզմ:

Ներածություն

Սերգեյ Սարինեանի գիտական աշխատանքների ժամանակագրությունն արդեն շատ բան է յուշում խնդրոյ առարկայ ռոմանտիզմի քննության հանդեպ հեղինակի վերաբերմունքի ու գիտական յանձնառությունների տեսականության մասին:

1955-ին լոյս տեսած «Քննադատական ռեալիզմի սկզբնաւորումը հայ գրականության մէջ» գրքին գրեթէ զուգահեռ, ուր գիտնականը ժամանակաշրջանի շատ գրականագէտների նման իր յանձնառութիւնը տեսաւ ռեալիզմի տիպաբանութիւնը քննելու մէջ, գիտակցում էր նաեւ այդ մթնոլորտում ռոմանտիզմը պաշտպանելու խնդրի կարեւորութիւնը: Պատահական չէ, որ 1956-ին Էդուարդ Զրբաշեանի համահեղինակութեամբ «Գրական թերթ»ում լոյս տեսաւ բանավիճային բաւական ծաւալուն «Ռոմանտիզմի գնահատման հարցի շուրջը» յօդուածը: Սա, ըստ էության, երկու տեսաբանների զգուշացումն էր գրականության պատմութիւնը միակողմանի գնահատութիւնների վտանգից

զերծ տեսնելու ճանապարհին. ողջունելով հանդերձ անցեալի մի քանի գրողների ռոմանտիզմը վերանայելու փորձերը՝ հեղինակները գտնում էին, որ «ամենեւին չի կարելի հաշտուել, երբ այդ փորձերը խեղաթիւրում են գրականութեան պատմութեան փաստերն ու օրինաչափութիւնները եւ հակասում են ստեղծագործական մեթոդների մասին ամենատարրական պատկերացումներին»¹: Իսկ ռոմանտիկ հեղինակների մասին պատկերացումները բերում էին Պատկանեանի, Բաֆֆու, Մուրացանի օրինակներով:

Սա, ըստ էութեան, Սերգէյ Սարինեանի համար դարձաւ յետագայ ուսումնասիրութիւնների ծաւալուն նիւթ, որով նա փորձեց լուծել ռոմանտիզմի պրոբլեմատիկան հայ գրականութեան մէջ՝ մի դէպքում դիմելով տիպաբանական ընդհանրացումների փորձին («Հայկական ռոմանտիզմ», 1966), միւս պարագային յատուկ ուսումնասիրութեան նիւթ դարձնելով հենց ռոմանտիկ հեղինակներին՝ Բաֆֆի (որին դիմել է երկիցս՝ «Բաֆֆի» (1957) եւ «Բաֆֆի. գաղափարների եւ կերպարների համակարգը» (երկու տպագրութիւններով՝ 1985 եւ 2010), Մուրացան («Մուրացան. տիպաբանութիւնը, էտիկան, պատմութեան փիլիսոփայութիւնը», 1976), «Լեւոն Շանթ» (1991), «Հայ նոր գրականութեան պատմութեան» հատորներում (1962–1979) մեծ մասամբ իր վրայ վերցնելով ռոմանտիկ հեղինակների ծանրութիւնը՝ Բաֆֆի, Սրբուհի Տիւսաբ, Մուրացան, անցնելով ապա նեօ-ռոմանտիզմի եւ սիմվոլիզմի ներկայացուցիչներին՝ Տէրեան, Սիւսանթօ, Լեւոն Շանթ, «Հայ վէպի պատմութիւն (19-րդ դար)» գրքում (2005)՝ նաեւ Աբովեան: Մօտաւորապէս նոյն տրամաբանութիւնն է նաեւ «Հայոց գրականութեան պատմութեան» երրորդ հատորում (2015):

¹«Գրական թերթ», Երեւան, 10 հոկտեմբերի, 1956, թիւ 37 (861), էջ 2:

Աշխատանքը շարադրուած է պատմահամեմատական եւ վերլուծական մեթոդներով:

Հայկական ռոմանտիզմի հանգրուանների սարինեանական արձանագրումները

Ռոմանտիզմի մայրողին իր համար բանուկ դարձրած գիտնականի համար հեշտ չի եղել համոզումներ գոյացնելու ճանապարհը: Դրանցից մէկի խօսուն վկայութիւնը կարդում ենք «Հայկական ռոմանտիզմ»ում, երբ վիճարկում է շուրջ մէկ տասնամեակ առաջ իր իսկ առաջ քաշած դրոյթը. «Ես նոյնպէս մի ժամանակ XIX դարի գրական շարժումը տեղադրում էի ռէալիզմ-ռոմանտիզմ զուգահեռ սխեմայում. ճշմարիտ է... ես տարբերակում էի ռոմանտիկական դպրոցի գրողներին (Պատկանեան, Շահագիգ, Րաֆֆի, Ա. Հայկունի եւ ուրիշներ), սակայն, վերջին հաշուով, գրականութեան առանցքագիծը ենթարկում էի ռէալիզմի տրամաբանութեանը»²: Աւելացնենք՝ առաջին հերթին ռոմանտիկ Խաչատուր Աբովեանին³, ում վերադառնում է «Հայկական ռոմանտիզմ»ի մէկ այլ հատուածում⁴: Այս ինքնադատութիւնը երկու կողմով է ուշագրաւ: Նախ, որ հեղինակը փորձում է վերատեսութեան ենթարկել իր իսկ առաջ քաշած թեզիսները եւ ծաւալուն ուսումնասիրութեամբ հիմնաւորել Աբովեանի ռոմանտիզմը, եւ երկրորդ՝ ուսանելի դաս կարող է լինել գիտնականների նոր սերունդների համար՝ գիտական ճշմարտութեան որոնումների ճանապարհին վեր կանգնելու անգամ սեփական ես-իպարտադրած ենթակայականութիւնից:

Նկատենք, որ Ս. Սարինեանը «Հայկական ռոմանտիզմ»ի մէջ առաջնային գծերում էր տեսնում տիպաբանական քննու-

² Սարինեան Ս., *Հայկական ռոմանտիզմ*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1966, էջ 62:

³ Տե՛ս՝ Նոյնը, *Քննադատական ռէալիզմի սկզբնաւորումը հայ գրականութեան մէջ*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1955, էջ 25:

⁴ Նոյնը, *Հայկական ռոմանտիզմ*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1966, էջ 126:

թեան պահանջը, որը, իր կարծիքով, «սովետահայ գրականագիտութեան հիմնական բացն է»⁵: Եւ իբրեւ օրինակ բերում է Վաչէ Պարտիզունու «Մուրացան. կեանքը եւ ստեղծագործութիւնը» մենագրութեան մէջ (1956) իր նկատած «բացթողումը». «Եթէ աշխարհայեացքը եւ պօետիկան մի ընդհանուր սիստեմի տակ դրուէին եւ քննութեան առնուէին գեղարուեստական մեթոդի տիպաբանական առանձնայատկութիւնների յստակ որոշութեամբ, ապա թում է, թէ հնարաւոր կը լինէր հիմնաւորել Մուրացանի ռոմանտիզմը»⁶: Սակայն չմոռանանք շեշտադրել մէկ հանգամանք, այն, որ Վ. Պարտիզունու մենագրութիւնը հրատարակուել է 1956-ին, այսինքն՝ իր «Քննադատական ռէալիզմի սկզբնաւորումը հայ գրականութեան մէջ» գրքից մէկ տարի անց՝ միաժամանակ դառնալով այն ազդակը, որ ծնունդ է տուել ռոմանտիզմը հիմնաւորելու սարիսեանական գաղափարին: Պատահական չէ, որ Զրբաշեանի համահեղինակութեամբ յօդուածում բաւական տեղ էր յատկացուած «ընդհանուր առմամբ արժէքաւոր մենագրութեան մէջ» Պարտիզունու մօտեցումներին⁷:

Այս ընդհանուր, տիպաբանական յատկանիշների կողքին ուշագրաւ էր նաեւ գիտնականի զգուշացումը՝ հաշուի նստել ներքին զարգացման տրամաբանութեան հետ, այն, որ գրական մեթոդը կամ ուղղութիւնը չի կարող զուտ, անխառն փոխանցուել մի ժողովրդից միւսի գրականութեանը: Այն իր մէջ ներառում է նաեւ տուեալ ժողովրդի պատմական զարգացման հանգրուանները: Սրանով է նաեւ պայմանաւորուած այն, որ «հայկական ռոմանտիզմը» դիտարկուում է երկու հիմնարար տեսանկիւններով՝ ռոմանտիզմի համաշխարհային տիպաբանութեան եւ հայ ժողովրդի մշակոյթի պատմութեան համատեքստում՝

⁵ Նոյն տեղում, էջ 71:

⁶ Նոյն տեղում, էջ 72:

⁷ «Գրական թերթ», Երեւան, 10 Հոկտեմբերի, 1956, թիւ 37 (861), էջ 3:

ուրուագծելով՝ նաեւ ազդեցութիւնների ու ինքնուրոյնութեան սահմանները: Իսկ ռոմանտիզմի ներթափանցումն ու տեսական ներկայութիւնը հայ գրականութեան պատմութեան մէջ Սարինեանն իրաւացիօրէն պայմանաւորում է նաեւ հայ մտաւորական կեանքի առանձնայատկութեամբ. «Գաղափարական արձագանգի գործնական հնարաւորութիւնների իմաստով մեր իրականութիւնը մի իւրայատուկ «առաւելութեամբ» էր երաշխաւորուած. մենք լոկալ ժողովուրդ չէինք. «հայութիւն» հասկացութեան մէջ մտնում էին ոչ միայն հայկական բնաշխարհը, այլեւ այն «գաղութները», որոնք փոռած էին Հնդկաստանից մինչեւ Եւրոպա, միաւորներ, որոնք իրենց «ինքնուրոյն» կեանքն ունէին, բայց որոնք ազգային թելերով կապում էին հայկական գաղափարի հետ»⁸: Եւ սա էր, ըստ Սարինեանի իրաւացի դիտարկման, հայ գաղափարի առաջանցիկութեան պայմանը:

Այս համաբնագրում գիտնականը զգուշացնում է մէկ այլ ծայրայեղութիւնից՝ ինքնութեան որոնման ճանապարհին չանտեսել տեսական ընդհանրական դրոյթները, ինչը մանիֆեստի նման է հնչում նաեւ մեր օրերի գիտութեան համար. «Միշտ չէ, որ տարբերակումը նաեւ հակադրութիւն է ենթադրում: ...Չկայ եւ չի՝ կարող լինել ազգային գրական ուղղութիւն եւ ազգային գեղարուեստական մեթոդ, ինչպէս եւ չկայ եւ չի կարող լինել ազգային գրականութեան տեսութիւն»⁹:

Քանց առնելու չէ մի ուշագրաւ նրբերանգ, որ կապում է «ռոմանտիզմ» եւ «ռոմանտիկա» հասկացութիւնների տարբերակման նայիւ կամ միտումնաւոր մօտեցումների հետ. «Նոյնացնելով այս հասկացութիւնները, որոշ գրականագէտներ արդէն հեզնում են պատմականութիւնը եւ ռոմանտիզմ փնտռում ամենուրեք, ցանկացած գրողի մօտ, մի տեսակէտ, որը եզրա-

⁸ Սարինեան Ս., *Հայկական ռոմանտիզմ*, էջ 76:

⁹ Նոյն տեղում, էջ 79:

կացութեան մէջ յանգում է ռոմանտիզմի տարրալուծմանը ռէալիզմի մէջ»¹⁰: Մօտաւորապէս նոյնական մի սկզբունք էլ գործում է բացասական հերոսների կերտման կամ նրանց իրական հանգամանքների մէջ տեսնելու մօտեցումից ելնելով անմիջապէս գրողին ռէալիզմը վերագրելու ջանքի մէջ: Պարզապէս անտեսւում է բացասական հերոսի միջոցով հեղինակային նպատակադրումի ճանապարհը: Այս ոչ արդարացուած միտումի արդիւնք է դիտում տեսաբանը Պատկանեանին եւ Բաֆֆուն ռէալիստների ճամբար հրելու փորձերը Հրայր Մուրադեանի եւ Եղիշէ Պետրոսեանի վերլուծումներում: Մէկ այլ դրուագում գրական ուղղութիւնների կողմնորոշման բանալին նոյն թեմատիկ ընտրութեան պայմաններում տալիս է արդէն ռէալիստական սոցիալական վէպի (Պերճ Պոօշեան) եւ ռոմանտիկական սոցիալական վէպի (Բաֆֆի) համադրումներով¹¹: Մօտաւորապէս նոյն ճանապարհով արդէն իդէալ հերոսի ճանաչման ուղեգծի վրայ է բերում հարցադրումը Բաֆֆու եւ Շիրվանզադէի ստեղծագործական քննութեան միջոցով («Ոսկի աքաղաղ» եւ «Գործակատարի յիշատակարանից»)¹²:

Ճիշդ է, որ «Հայկական ռոմանտիզմ»ը միտում է պատասխաններ գտնել ընդհանրապէս ռոմանտիզմի տիպաբանական հարցադրումներին, բայց նոյնքան կարեւոր է առանձին հեղինակների «ռոմանտիզմների» դիտարկումը, եւ այստեղ է Սարինեանի ուժը՝ ներքին տեսութեան ենթարկել իւրաքանչիւրին յատուկ գծերը, միաժամանակ ընդհանրութեան մէջ տեսանելի դարձնել նրանց որակական տարբերութիւնները. այդպէս է, որ «կլասիկական չափաբանութեան դատողական կառոյցի նկարագրական պատումին Ալամդարեանը հակադրեց ներքին ապ-

¹⁰ Նոյն տեղում, էջ 37:

¹¹ Տե՛ս՝ նոյն տեղում, էջ 413–414:

¹² Տե՛ս՝ նոյն տեղում, էջ 465:

րումների լիրիկական զեղումը...»¹³, Թադիադեանը «առաջին գրագետն էր..., որ ընկալեց ռոմանտիզմը, կարդաց սրա ակա-նատոր ներկայացուցիչներին (Բայրոն, Շելլի, Սկոտտ, Լոնգֆել-լո), իրացրեց գրական այդ դպրոցի գաղափարական ու գեղա-գիտական մի շարք սկզբունքներ»¹⁴: Մէկ այլ մակարդակի ար-ձանագրում էր Հ. Ղեւոնդ Ալիշանի ռոմանտիզմը, որ իր բնոյթով «պատմա-հայրենասիրական ռոմանտիզմի մի ուրոյն հայեցու-թեան սինթեզ է»¹⁵, որով հիմնադրեց այն ուղղութիւնը, որի հե-տետորդները դարձան Պէշիկթաշլեանը, Պատկանեանը եւ շատ ուրիշներ:

Այդպէս նաեւ արտաքին ուժերի միջամտութեամբ յատ-կանշուող ազգային ողբերգութեան դիմաց ներքին դաւադրու-թիւնների կեռմաններում «արեւմտահայ ռոմանտիզմը գտաւ Պետրոս Դուրեանին, որպէսզի սրա հանճարի մեծ տարերքով չափէր հայկական իրականութեան ազգային ու համամարդկա-յին թախիծը»¹⁶: Ի դէպ, տեսաբանը հենց Դուրեանին է դարձ-նում այն զգայաչափը, որի շուրջ համախմբում են միւս ռոման-տիկները՝ Ալիշան, Պատկանեան, Պէշիկթաշլեան, Շահագիզ¹⁷ դուրեանական պատկերի օրինակներով («Դրժել», «Տրտունջք», «Թրքոսիին», «Նէ», «Ներա հետ») հաւաստելով, որ Դուրեանն ստեղծեց «բանաստեղծական մտածողութեան այն նոր որա-կը..., որին հայ պոեզիան հասաւ տասնամեակներ յետոյ»¹⁸:

Մօտաւորապէս նոյն տրամաբանութեամբ չէ՞ արդեօք քննում դուրեանական ֆենոմենը Սերգէյ Սարինեանի «ընդդի-մախօս» Պարոյր Սեւակը (յիշենք նրա «Հայկական ռոմանտիզմը եւ իր մեկնաբանը» յօդուածը)՝ յայտարարելով արեւմտահայ

¹³ Նոյն տեղում, էջ 106:

¹⁴ Նոյն տեղում:

¹⁵ Նոյն տեղում, էջ 248:

¹⁶ Նոյն տեղում, էջ 284:

¹⁷ Տե՛ս՝ Նոյն տեղում, էջ 390:

¹⁸ Նոյն տեղում, էջ 392:

քերթողին այն «կամրջասիւնը, որի վրայ՝ հսկայական աղեղներ գծելով պիտի միանային հայրեններն ու Վարուժանը, Սայեաթ-Նովան ու Տէրեանը»¹⁹:

Ինչ մնում է ռոմանտիկական արձակին, ապա 60-ականներին աչքի էին ընկնում Գրիգոր Չիլկինկիրեանն ու Արմենակ Հայկունին, որոնց գեղագիտությունը ուրուագծում է հիմնականում եւրոպական վէպի եւ Հիւգոյի հետ համադրումների ճանապարհով: Իսկ ահա 70-ականներին ռոմանտիզմի յաղթարշաւում Ծերենցն ու Բաֆֆին են: Առաջինի «Երկունք Թ. դարու»-ն Սարինեանը համարում է Աբովեանի «Վէրք...»-ից յետոյ «հայ վիպագրութեան ամենամեծ խիզախումը», «հայ պատմառոմանտիկական վէպի այն մեծ յայտնությունը, որի հանդէպ ապշահար մնաց պատմագրությունը»²⁰: Ինչ մնում է Բաֆֆուն, նա դարձաւ «ժամանակի գրականութեան եւ հայկական ռոմանտիզմի կոռքը, որի մահով փաստօրէն աւարտուեց գրական մի ամբողջ դպրոցի հեգեմոնիան»²¹: Պատահական չէ, որ Բաֆֆին գրականագէտ-տեսաբանի համար կայուն նախասիրություն մնաց գրեթէ ամբողջ ստեղծագործական կեանքի համար:

Այնուամենայնիւ, «Հայկական ռոմանտիզմ»ի ընթերցողի մօտ մնում են չլուսաբանուած հարցադրումներ՝ Թովմաս Թերգեանի, Խորէն Նար-Պէյի, Արմենակ Հայկունու, Մատթէոս Մամուրեանի եւ այլոց հետ կապուած: Մանաւանդ ֆրանսիական ռոմանտիզմի ազդեցութիւնների առումով առաւել խորութեամբ կարող էին ուրուագծուել Լամարթին-Խորէն Նար-Պէյ, ֆրանսիական նամակագրական վէպ-Մամուրեան առնչութիւնները, որոնց «Վերջաբան»ում անդրադառնում է ինքը հեղինակը՝

¹⁹ Սեակ Պ., *Երկերի ժողովածու 6 հատորով*, հատոր 5 / Գրականագիտութիւն, քննադատութիւն, Երեւան, «Հայաստան» հրատ., 1974, էջ 161:

²⁰ Սարինեան Ս., *Հայկական ռոմանտիզմ*, էջ 434:

²¹ Նոյն տեղում, էջ 402–403:

«կանխելու համար որոշ տարակարծություններ»²², որոնք, այնուհանդերձ, մնում են:

Այդ նոյն հարցադրումն առաջանում է կապուած առաջին հերթին Մուրացանի հետ, ինչի առթիւՍարինեանի բացատրութիւնը շատ ասելի հիմնատր է հնչում. «Կարող է հարց ծագել՝ իսկ Մուրացա՞նը...: Մեր աշխատութիւնն աւարտում է մի կէտում, որից կարող է սկիզբ առնել հայկական ռոմանտիզմի պատմութեան մի նոր էտապի ուսումնասիրութիւնը, մեր քննութեան առարկան այսպէս ասած, հայ «դասական ռոմանտիզմն» է»²³: Խորքի մէջ, սակայն, Սարինեանը զգուշանում է ասել, որ «պատրաստում է» այդ հարցին նոյնպէս անդրադառնալ, ինչը եւ կատարում է արդէն «Մուրացան» (1976, 2004) մենագրութեան միջոցով: Որքան էլ իր յանձնառութիւնը մէկ հեղինակի շուրջ է պտտում, այնուամենայնիւ այս նոր գրքի ներածութեան մէջ բաւական մանրամասն քննութեան են ենթարկում ռոմանտիզմի տիպաբանութիւնը քննարկող այն բոլոր նուաճումները, որոնց հասել է խորհրդային գրականագիտութիւնը երկու գրքերի միջեւ ընկած ժամանակահատուածում: Այս նոյն հատուածում է ստուգում նաեւ տասը տարի առաջ հնչեցրած իր կարծիքների կենսունակութիւնը՝ յատկապէս նկատի ունենալով հայկական ռոմանտիզմի ծագման լուսատրական բնոյթը, որը «աննկատ չմնաց ռոմանտիզմի պատմութեան ու տեսութեան հետազոտողներին»²⁴ ասածը հիմնատրելով համապատասխան օրինակներով:

Այս մենագրութեան մէջ ռոմանտիզմի գնահատութեան առումով առանձնակի նշանակութիւն է ստանում «Մեթոդը եւ տիպաբանութիւնը» գլուխը, ուր հիմնատր անդրադարձ է կատա-

²² Նոյն տեղում, էջ 520:

²³ Նոյն տեղում, էջ 521:

²⁴ **Նոյնը**, *Մուրացան. տիպաբանութիւնը, էտիկան, պատմութեան փիլիսոփայութիւնը*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1976, էջ 11:

րում Մուրացանի մեթոդի շուրջ գրականագիտական մօտեցումներին՝ Արսէն Տէրտէրեան, Յարութիւն Սուրիսաթեան, Վաչէ Պարտիզունի, Յովհաննէս Մամիկոնեան եւ ուրիշներ: Կարելոր շեշտադրումներից մէկն էլ այն էր, որ Սարիսեանը փորձեց ցոյց տալ Մուրացանի տիպականացման արուեստի տարբերութիւնը Բաճֆուց. այն է՝ Մուրացանը «խզեց հայկական ռոմանտիզմի կապը բուրժուական լուսաւորական աշխարհայեցութեան հետ»²⁵: 1830-1880-ական թթ. դասական ռոմանտիզմը, ըստ Սարիսեանի, իր «ուրորտն էր ներքաշում բոլոր այն խնդիրները, ինչ Եւրոպան լուծել է 17-18-րդ դարերում, պայմանաւորելով հայկական ռոմանտիզմի համապարփակ, սինկրետիկ բնոյթը»²⁶, որի մէջ դեր էին ունեցել տասնեակ արուեստագէտներ՝ Հերդերից ու Հեգելից մինչեւ Լամարթին ու Վալտեր Սքոտ, Մոնտեսքէօ եւ Ռուսօ: Այսպէս էր մեկնաբանում «դասական ռոմանտիզմի» էութիւնը «Հայկական ռոմանտիզմի տիպաբանութիւնը» յօդուածում, որ գրուել է 1974-ին: Իսկ արդէն Մուրացանի օրինակով հայկական ռոմանտիզմը դուրս էր գալիս սինկրետիկութիւնից:

Նոյն այդ յօդուածում խօսք էր բացւում նաեւ ռոմանտիզմի երրորդ շնչառութեան՝ 20-րդ դարասկզբի սիմվոլիստ-ռոմանտիկների մասին՝ ըստ էութեան գիտական մի նոր տեսողութիւն, որ բացուեց արդէն «Լեւոն Շանթ» մենագրութեան (1991) ճանապարհով: Չխորանալով Շանթի քննութեան մանրամասների մէջ եւ զանց առնելով նրա դրամաների պատմականութեան բանավէճերը՝ նկատենք, որ Սարիսեանը հաստատում է մի անվիճարկելի թուացող թեզ, այն, որ ինքը «որոշակիօրէն գիտակցում էլ...ոչ միայն Շանթի կապը ազգային գրականութեան աւանդուե-

²⁵ Նոյն տեղում, էջ 92:

²⁶ «Մովետական գրականութիւն» / գրական-գեղարուեստական, տեսական-քննադատական ամսագիր, Երեւան, 1974, Նոյեմբեր, թիւ 11, էջ 116:

րին, այլեւ նրա իդէալների խորապէս ազգային եւ իրապէս պատմական բովանդակութիւնը»²⁷:

Եզրակացութիւններ

Հայկական ռոմանտիզմին սարինեանական մօտեցումների կերպերը գալիս են ցոյց տալու, որ ի սկզբանէ գիտակցուած կամ ենթագիտակցօրէն գիտնականն իր առջեւ խնդիր է դրել ցոյց տալ ռոմանտիզմի՝ հայ գրականութեան մէջ անցած ճանապարհի կեղծմանները՝ նախ, դասական ռոմանտիզմի սահմաններում՝ իբրեւ համապարփակ քննութեան դաշտ («Հայկական ռոմանտիզմ», 1830–1880-ականներ), ապա՝ առանձին շեշտադրումների ճանապարհով («Բաֆֆի»՝ գաղափաների եւ կերպարների բացայայտումով, «Մուրացան»՝ ուշացած ռոմանտիզմի իբրեւ օրինակ, եւ «Լեւոն Շանթ»՝ 20-րդ դարասկզբի նէօռոմանտիկական եւ սիմվոլիստական մտածողութեան ծիրում), ինչը տարբեր թելերով գալու կապուելու էր «հայոց ազգային գաղափարաբանութեան» սարինեանական ըմբռնումին:

Եւ վերջում. Սարինեան կամ Սարինեանին կարդալ նշանակում է հաղորդակից դառնալ ոչ միայն ազգային, այլեւ առհասարակ մարդկային պատմութեանն ու այդ պատմութեան շարժընթացի պատճառականութեանը, ինչը երեւոյթները հասկանալու «յուսակի» ճանապարհ է:

²⁷ Սարինեան Ս., *Լեւոն Շանթ*, Երեւան, «Նաիրի» հրատ., 1991, էջ 39:

КНАРИК АБРААМЯН

Кандидат филологических наук, доцент

АГПУ им. Хачатура Абовяна

*кафедра новой и новейшей армянской литературы и
методики ее преподавания имени Ваче Партизуни*

ПОНИМАНИЕ РОМАНТИЗМА У САРИНЯНА

Резюме

Статья посвящена пониманию романтизма Сергеем Сариняном. В ней акцентируются ключевые этапы, через которые прошёл учёный на пути определения этого литературного направления. В частности, рассматривается значительный труд «*Армянский романтизм*» (1966), который, по сути, и сегодня остаётся непревзойдённым в армянском литературоведении. Вопросы типологии романтизма интересовали автора гораздо раньше — ещё в 1956 году, когда в соавторстве с теоретиком Эдвардом Джрбашяном была опубликована статья «*К вопросу оценки романтизма*». Это был период, когда от учёных требовалось рассматривать писателей в рамках реалистического направления. Именно в этом контексте особую значимость приобретает научная задача С. Сариняна по «защите» романтических авторов.

Подходы Сариняна к армянскому романтизму показывают, что, сознательно или подсознательно, он поставил перед собой задачу раскрыть повороты и изгибы пути романтизма в армянской литературе. С одной стороны, он рассматривал его в рамках классического романтизма как обширное поле исследования («Армянский романтизм», 1830–1880-е годы). С другой стороны, он исследовал его через отдельные акценты: «Раффи» — через раскрытие идей и образов, «Мурацан» — как пример запоздалого роман-

тизма, и «Левон Шант» — в контексте неоромантического и символистического мышления начала XX века.

Концепция «армянского романтизма» С. Сариняна рассматривается с двух фундаментальных точек зрения: в рамках мировой типологии романтизма и в историко-культурном контексте армянского народа, очерчивая границы влияний и самобытности.

Исследование основано на историко-сравнительном и аннотационном методах.

Ключевые слова: *Сергей Саринян, литературное направление, армянский романтизм, реализм, типологические черты, теоретические положения, французский романтизм.*

KNARIK ABRAHAMYAN

*PhD, associate professor,
ASPU after Khachatur Abovyan the Chair of
New and Modern Armenian Literature and its
Teaching Methods after Vache Partizuni*

SARINIAN'S UNDERSTANDING OF ROMANTICISM

Abstract

The article is dedicated to Sergey Sarinyan's understanding of Romanticism. It highlights the key stages the scholar went through in defining this literary movement. In particular, it examines the significant work "Armenian Romanticism" (1966), which, in essence, remains unsurpassed in Armenian literary studies even today. The issues of Romanticism's typology interested the author much earlier, as early as 1956, when, in collaboration with theorist Edward Jrbashyan, he co-authored the article "On the Question of Evaluating Romanticism." This was a period when scholars were required to view

writers within the framework of the realist movement. In this context, S. Sarinyan's scholarly endeavor to "defend" Romantic authors is of great significance.

Sarinian's approaches to Armenian Romanticism demonstrate that, whether consciously or subconsciously, he set out to reveal the twists and turns of Romanticism's path in Armenian literature. On the one hand, he examined it within the framework of classical Romanticism as a comprehensive field of study ("Armenian Romanticism," 1830s–1880s). On the other hand, he explored it through specific emphases: "Raffi", by uncovering ideas and characters; "Muratsan", as an example of late Romanticism; and "Levon Shant", within the context of early 20th-century neo-Romantic and Symbolist thought.

S. Sarinyan's concept of "Armenian Romanticism" is analyzed from two fundamental perspectives: within the global typology of Romanticism and in the historical and cultural context of the Armenian people, outlining both influences and elements of originality.

The study is conducted using historical-comparative and analytical methods.

Keywords: *Sergey Sarinyan, literary movement, Armenian Romanticism, realism, typological features, theoretical principles, French Romanticism.*